**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**18.07.2019թ. կնքված N ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/27 ծածկագրով**
**պետական գնման պայմանագրի**

**ք.Երևան** **«27» 12 . 2019թ.**

ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Տիգրան Գալստյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ)՝ մի կողմից, և «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Նարիբեկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին /այսուհետ՝ Կողմեր/, հիմք ընդունելով 18.07.2019թ. կնքված N ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/27 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը և ՀՀ կառավարության 05.12.2019թ. թիվ 1763-Ն որոշումը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

## 1. Համաձայնագրի առարկան

Նախատեսվում է «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ ձեռք բերել լրացուցիչ ապրանքներ պայմանագրի ընդհանուր գնի 10 տոկոսի չափով:

1.1 Պայմանագրի 3.1 կետի «8748600 (ութ միլիոն յոթ հարյուր քառասունութ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն» բառերը փոխարինել «9238500 /ինը միլիոն երկու հարյուր երեսունութ հազար հինգ հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ» բառերով:

1.2 Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելված 1-ը և 2-ը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելված 1-ի և 2-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կազմված է    էջից, հայերեն լեզվով՝ կնքված երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի N 1 և 2 հավելվածները համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| **ՀՀ ԱԺ աշխատակազմ** | |
| **ք.Երևան, Մ.Բաղրամյան 19** | **«Արգավանդ Կահույք» ՍՊԸ** |
| **ՀՎՀՀ 00008519** | **ՀՀ ք.Երևան, Անդրանիկի 129, բն.4** |
| **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն** | **ՀՎՀՀ 01261634** |
| **Հ/Հ 900011020147** | **«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Մետաքս մ/ճ** |
| **ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար – գլխավոր քարտուղար՝** | **Հ/Հ 163218020242** |
| **Տ. Գալստյան** | **Տնօրեն՝ Վ. Նարիբեկյան** |
| ------------------------------- | ------------------------------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 1*
***«11» հուլիսի 2019թ. կնքված***
*ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/27 ծածկագրով **պայմանագրի***
*«27» «12» 2019 թ. **կնքված Համաձայնագիր** N1*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | արտադրողի անվանումը և ծագման երկիրը** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը՝ [illegible] 2019թ. |
| 1 | 39151140/2 | Շարժական գրադարակներ | <<Դամկար>> ՍՊԸ ՀՀ | Շարժական գրադարակներ՝ հիմնական նյութը E1 դասի որակի ստանդարտին համապատասխանող, եռաշերտ և էկոլոգիապես մաքուր ՓԹՍ (ДСП), որը ծածկված է մելամինային խեժերով հատուկ մշակում անցած և դիմացկուն լամինատե անփայլ շերտով: Շարժական գրադարակների մակերեսը, կողային մասերը և հիմնապատերը 25 մմ հաստությամբ ԼՓԹՍ- ից (ЛДСП): Շարժական գրադարակների տեսանելի հատվածները պատված են 2 մմ հաստությունից պոլիվինիլքլորիդային (PVC) եզրաժապավենով: Գույնը STARWOOD -87 BUTE, չափերը 600-400-550 մմ (անվակներով-670 մմ): Անվակները սիլիկոնե, երեք դարակաշարով, փականներով, բռնակները ալյումինե, դարակաշարերի ետնամասերը 4 մմ հաստությունից ՓՄԲ - ով (ДВП), դարակաշարերի բացվող մեխանիզմը անիվային: Ապրանքը նոր է, վնասվածքներից զերծ պահելու համար փաթեթավորված կլինի պաշտպանիչ նյութով: Գինը ներառում է նաև կահույքի հավաքումը, տեղափոխումը և տեղադրումը: Երաշխիքային ժամկետը նվազագույնը 60 ամիս: Օգտագործված բոլոր նյութերը բարձրորակ: | հատ | 22980 | 459600 | 20 | ՀՀ ԱԺ, ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19 | 20 | III-րդ եռամսյակի ընթացքում |
| 2 | 39121420/2 | Կցասեղան՝ պահարանիկով (դարակով) | <<Դամկար>> ՍՊԸ ՀՀ | Կցասեղան պահարանով, հիմնական նյութը E1 դասի որակի ստանդարտին համապատասխանող, եռաշերտ և էկոլոգիապես մաքուր ՓԹՍ (ДСП), որը ծածկված է մելամինային խեժերով հատուկ մշակում անցած և դիմացկուն լամինատե անփայլ շերտով: Կցասեղանի պահարանի մակերեսը, կողային մասերը հիմնապատերը 25 մմ հաստությամբ, ԼՓԹՍ-ից (ЛДСП): Կցասեղան պահարանի տեսանելի հատվածները պատված են 2 մմ հաստության պոլիվինիլքլորիդային (PVC) եզրաժապավենով: Գույնը STARWOOD - 87 BUTE (15 հատ), սև-անփայլ (3 հատ) և դուք սոնոմա (42 հատ), | հատ | 27500 | 1650000 | 60 | | 60 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | **չափերը 1200-680-450 մմ, երեք դարակաշարով, փականներով, բռնակները ալյումինե, դարակաշարերի եռնամասերը 4 մմ հաստությունից ոչ պակաս ՓՄԲ-ով** (ДВП), դարակաշարերի բացվող մեխանիզմն անիվային, մեջտեղի հատվածում բաց դարակ: Ապրանքը նոր է, վնասվածքներից զերծ պահելու համար փաթեթավորված կլինի պաշտպանիչ նյութով: Գինը ներառում է նաև կահույքի հավաքումը, տեղափոխումը և տեղադրումը: Երաշխիքային ժամկետը նվազագույնը 60 ամիս: Օգտագործված բոլոր նյութերը բարձրորակ: | | | | | | | |
| 3 | 39141260/2 | Զգեստապահարան | <<Դամկար>> ՍՊԸ<br><< | Զգեստապահարանի հիմնական նյութը՝ E1 դասի որակի ստանդարտին համապատասխանող, եռաշերտ և էկոլոգիապես մաքուր ՓԹՍ (ДСП), որը ծածկված է մելամինային խեժերով հատուկ մշակում անցած և դիմացկուն լամինատե անփայլ շերտով: Զգեստապահարանի հիմնապատերը, դարակաշարերը և դռները 18մմ հաստությամբ ԼՓԹՍ-ից (ЛДСП), իսկ հետնապատը 3,2մմ հաստությամբ ՓՄԲ-ով (ДВП): Զգեստապահարանի տեսանելի հատվածները պատված են 2մմ հաստությունից պոլիվինիլքլորիդային (PVC) եզրաժապավենով կամ մելամինացված պոլիվինիլքլորիդային նյութով (կրոմկա ПВХ): Չափերը՝ 850*410*1930մմ, բոլոր բռնակները՝ ալյումինե: Զգեստապահարանն ունի երկու փակ դռներ: Զգեստապահարանը բաժանված է երեք մասի՝ երկու համաչափ մասեր ներքևում և վերևում (250 մմ), և միջնամասի մեծ խցիկ՝ նախատեսված զգեստների համար (1300մմ): Զգեստապահարանն ունի կախիչ՝ մեկ մետաղական ձողի կամ անհատական նվազագունը 3 մետաղական կախիչների տեսքով: Զգեստապահարանի գույնը՝ դուք սոնոմա: Ապրանքը նոր է: Օգտագործված բոլոր նյութերը բարձրորակ: Երաշխիքային ժամկետը՝ նվազագույնը 60 ամիս: Գինը ներառում է նաև կահույքը հավաքելու (վերջնական տեսքով տեղադրելու) ծախսերը: | հատ | 33000 | 660000 | 20 | | 20 | III-րդ եռամսյակի ընթացքում |
| 4 | 39121320/2 | Սեղան՝ դիմադիր | <<Դամկար>> ՍՊԸ<br><< | Սեղան դիմադիր, հիմնական նյութը E1 դասի որակի ստանդարտին համապատասղանող, եռաշերտ և էկոլոգիապես մաքուր ՓԹՍ (ДСП), որը ծածկված է մելամինային խեժով հատուկ մշակում անցած և դիմացկուն լամինատե անփայլ շերտով: Դիմադիր սեղանի մակերեսը, կողային մակերեսը հիմնապատերը 25 մմ հաստությամբ ԼՓSU - ից (ЛДСП), իսկ միջնապատը, որը կլինի դիմադիր սեղանի մեջտեղի հատվածում, 18 մմ հաստությամբ: Դիմադիր սեղանի տեսանելի հատվածները պատված են 2 մմ հաստությունից պոլիվինիլքլորիդային (PVC) եզրաժապավենով, չափերը 800-700-700 մմ, գույնը՝ դուք սոնոմա (42 հատ), սև-անփայլ (15 հատ) և STARWOOD- 87 BUTE (23 հատ): Ապրանքը նոր է, վնասվածքներից զերծ պահելու համար փաթեթավորված կլինի պաշպանիչ նյութով: Գինը | հատ | 13500 | 1080000 | 80 | | 80 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ներառում է նաև կահույքի հավաքումը, տեղափոխումը և տեղադրումը: Երաշխիքային ժամկետը նվազագույնը 60 ամիս: Օգտագործված բոլոր նյութերը բարձրորակ: | | | | | | | |
| 5 | 39111220/2 | Բազկաթոռ գրասենյակայի ն | <<Արտ-Պրոմ>> ՍՊԸ Ուկրաինա | Ծույլատրելի առավելագույն ծանրաբեռնվածությունը՝ 120 կգ, շարժական 4 անվակների վրա, միմյանց կապակցված 4-թևանի խաչուկով: Խաչուկը՝ պլաստմասե: Նստատեղը և հենակը տարբեր դիրքերում և բարձրություններում ֆիքսելու հնարավորություն ունեցող բարձրորակ մեխանիզմով: Բազկաթոռը երեսպատված է էկոկաշվով, գույնը՝ շագանակագույն կամ սև, քաշը՝ առավելագույնը 23 կգ: Ապրանքը նոր է, վնասվածքներից զերծ պահելու համար փաթեթավորված կլինի գործարանային տուփերում: Երաշխիքային ժամկետը՝ նվազագույնը 2 տարի: | հատ | 48990 | 5388900 | 110 | | 110 | IV-րդ եռամսյակի ընթացքում |

- Համաձայն կից ներկայացված՝ Գծագիր 1-ի, 2-ի, 3-ի, 4-ի և 5-ի:

*Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փվյալ փարվա սեպտեմբերի 30-ը:

**Եթե հրավերով չի նախատեսվում առաջին փեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի և արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա «անվանումը և ապրանքային նշանը» սյունակից հանվում է «և ապրանքային նշանը», իսկ «արտադրողի անվանումը և ծագման երկիրը» սյունակից՝ «արտադրողի անվանումը և» բառերը:

**ԳՆՈՐԴ**
**ՀՀ ԱԺ աշխատակազմ**
**ք.Երևան, Մ.Բաղրամյան 19**
**ՀՎՀՀ 00008519**
**ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011020147**
**ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար – գլխավոր քարտուղար՝**
**Տ. Գալստյան**

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
**«Արգավանդ Կահույք» ՍՊԸ**
**ՀՀ ք.Երևան, Անդրանիկի 129, բն.4**
**ՀՎՀՀ 01261634**
**«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Մետաքս մ/ճ**
**Հ/Հ 163218020242**
**Տնօրեն՝ Վ. Նարիբեկյան**

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
*«11» հուլիսի 2019թ. կնքված*
*ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-19/27 ծածկագրով պայմանագրի*
*« 27» « 12» 2019 թ. կնքված Համաձայնագիր N1*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը /5122/ | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 39151140/2 | Շարժական գրադարակներ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 459600 | 459600 | 459600 | 459600 | 459600 | 459600 | 459600 |
| 2 | 39121420/2 | Կցասեղան՝ պահարանիկով (դարակով) | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 1650000 | 1650000 | 1650000 | 1650000 | 1650000 | 1650000 | 1650000 |
| 3 | 39141260/2 | Զգեստապահարան | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 660000 | 660000 | 660000 | 660000 | 660000 | 660000 | 660000 |
| 4 | 39121320/2 | Սեղան՝ դիմադիր | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 1080000 | 1080000 | 1080000 | 1080000 | 1080000 | 1080000 | 1080000 |
| 5 | 39111220/2 | Բազկաթոռ գրասենյակային | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 4899000 | 4899000 | 4899000 | 4899000 | 4899000 | 5388900 | 5388900 |

**ԳՆՈՐԴ**
**ՀՀ ԱԺ աշխատակազմ**
**ք.Երևան, Մ.Բաղրամյան 19**
**ՀՎՀՀ 00008519**
**ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011020147**
**ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար – գլխավոր քարտուղար՝**
**Տ. Գալստյան**

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
**«Արգավանդ Կահույք» ՍՊԸ**
**ՀՀ ք.Երևան, Անդրանիկի 129, բն.4**
**ՀՎՀՀ 01261634**
**«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Մետաքս մ/ճ**
**Հ/Հ 163218020242**
**Տնօրեն՝ Վ. Սարիբեկյան**

/ստորագրություն/
Կ.Տ